ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Նաիրա Գրիգորյան, ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2024թ. օգոստոսի 12-ից 16-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Կառավարության պարտքի կառավարման կատարողականի գնահատում (Global Workshop on Government Debt Management Performance Assessment (DeMPA))» թեմայով գլոբալ աշխատաժողովին

5. Քննարկված թեմաները.

1) Ծանոթություն պարտքի կառավարման կատարողականի գնահատման (DeMPA) հետ
2) Կառավարում և պարտքի ռազմավարություն (իրավական դաշտ և կառավարման կառուցվածք)
3) Կառավարում և պարտքի ռազմավարություն (պարտքի կառավարման ռազմավարություն)
4) Կառավարում և ռազմավարության զարգացում (պարտքի հաշվետվողականություն և աուդիտ)
5) Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների հետ կոորդինացում
6) Փոխառություն և դրան առնչվող ֆինանսական գործունեություն
7) Կանխիկ հոսքերի կառավարում
8) Պարտքի գրանցում, սպասարկում և գործառնական ռիսկերի կառավարում
9) Պարտքի կառավարման կատարողականի գնահատման (DeMPA) գործընթաց
10) Պայմանական պարտավորությունների կառավարում
11) Բարեփոխումների ծրագրերի նախագծում և իրականացում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովին ներկա են գտնվել 11 երկրների 28 մասնակիցներ: Աշխատաժողովի ընթացքում Համաշխարհային բանկի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: Համաշխարհային բանկի ներկայացուցիչների կողմից մասնակիցները բաժանվել են 5 խմբերի, որոնց առաջադրվել է կատարել ենթադրյալ երկրի պարտքի կառավարման կատարողականի գնահատում (DeMPA): Աշխատաժողովի ընթացքում յուրաքանչյուր երկրից մեկ կամ մի քանի մասնակիցներ ներկայացրել են շնորհանդես իրենց երկրի վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Գործուղվող՝

ՀՀ ֆինանսների նախարարության
պետական պարտքի կառավարման
վարչության հաշվառման և սպասարկման
բաժնի գլխավոր մասնագետ

Նաիրա Գրիգորյան

28.08.2024թ.